

ՂԱՉԱՐ ԶԱՀԿԵՑՈՒ «ԳԻՐՔ ԱՂՕԹԻՑ»-Ի 1742-1744 ԹԹ. ՏՊԱԳՐՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ

Բանալի բառեր՝ Հնատիպ գիրք, Ղազար Ջահկեցի, Գիրք աղօթից, տպագիր գիրք, Աբրահամ Թրակացի, տպարան, Կոստանդնուպոլիս, ձեռագիր, փորագրապատկեր:

Հայ գրատպությունն իր սկզբնավորումն ու նախնական զարգացումն է ապրել Հայաստանից դուրս՝ օտար միջավայրում: Հայկական տպարաններ են հիմնվել և հայերեն գրքեր տպագրվել արտերկրում՝ Վենետիկում, Կ. Պոլսում, Հռոմում, Միլանում, Մադրասում, Պետերբուրգում, Ամստերդամում և այլուր¹. այսպես՝ «... հայ տպարանը իր հետ աշխարհի զանազան կողմերն էր տանում հայ գրականությունը»²:

Այսօր հայերեն հնատիպ գրքերը սփռված են աշխարհով մեկ: Ամենահարուստ գրապահոցները Հայաստանի Ազգային գրադարանում (այսուհետև՝ ԱԳ) և Մաշտոցյան Մատենադարանում (այսուհետև՝ ՄՄ) են: Որոշ հնատիպ գրքեր պահպանվում են Մատենադարանի ձեռագրերի հետ նույն կազմում, այլ կերպ՝ միակազմ են: Նման մի օրինակ է նաև ՄՄ 9268 ձեռագիրը, որին կցված է 2 տպագիր նյութ: Մատյանի 257 թերթից 80-ը ձեռագիր է, իսկ մնացածը՝ հնատիպ, ընդ որում ձեռագիր նյութի 10 թերթը գտնվում է սկզբում, 7-ը՝ վերջում. դրանք տոմարական բնույթի են: Մնացած ձեռագիր նյութը աղոթքներ (հեղինակություն՝ Հովհաննես Գառնեցու, Մեսրոպ վրդ-ի, Հովհան Ոսկեբերանի և այլոց) և Շարակնոցի «Օրհնություն պահոց»-ից հատվածներ են: Վերջիններս 2-3-ական թերթերով գտնվում են տպագիր թերթերի արանքում, սակայն տպագիր նյութի բովանդակությամբ հետ չեն առնչվում: Միակ ընդհանուր բանն այն է, որ դրանք էլ, տպագիր նյութերն էլ աղոթքներ են:

Երբեմն հնատիպ գրքերի մի մասն ունենում է մեկից ավելի տպագրություն,

* Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, marinesargsyan1984@mail.ru, հոդվածը ներկայացնելու օրը՝ ապրիլի 12, 2023, հոդվածը գրախոսելու օրը՝ մայիսի 21, 2023:

¹ Մոտ երկուս ու կես դար հետո միայն հնարավոր եղավ Հայաստանում՝ Էջմիածնում, տպարան հիմնել (1771 թ.). տե՛ս Ա. Բաբայան, Հայ գիրքը և տպագրությունը, Երևան, 1963, էջ 45:

² Աթո, Հայկական տպագրություն, հ. I, Թիֆլիս, 1901, էջ II:

որի արդյունքում ստացվում են նույն գրքի տարբերակները: Դրա վառ օրինակ է 1742-44 թթ. Պոլսում՝ Աբրահամ Թրակացու տպարանում տպագրված Ղազար Զահկեցու «Գիրք աղօթից»-ը, որի տարբերակների քննությունն էլ նվիրված է այս աշխատանքը: Այդ են վկայում գրքում առկա որոշ պատկերների ձևավորման տարբերությունները (հիշատակարանները նույնն են):

ՄՄ 9268 ձեռագրի տպագիր նյութերից առաջինը Ղազար Զահկեցու «Գիրք աղօթից»ն է տպագրված 1742-44 թթ., Կ. Պոլսում՝ Աբրահամ Թրակացու տպարանում³, իր իսկ մասնակցությամբ⁴: Մյուսը եփրեմ Խուրի Ասորու «Գիրք աղօթից»-ն է տպված 1741 թ., կրկին Կ. Պոլսում՝ Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու տպարանում, կրկին իր իսկ տպագրությամբ⁵:

Սույն հոդվածը Ղազար Զահկեցու «Գիրք աղօթից»ի տարբերակների քննության փորձ է: Համեմատության արդյունքում պարզվեց, որ նույն թվականին նույն տպարանում տպված այս հնատիպն ունի մի քանի տարբերակ, որոնցում արձանագրված տարբերություններն արտահայտված են մինչև 65-րդ էջը: Մնացածը նույնական է:

Այս գրքից ԱԳ-ում պահվում է 2 օրինակ (129-ԱՀ, 128-ԱՀ), 1-ը՝ ԳԱԹ-ում (Թ. Ազատյանի ֆոնդ 8463), Մատենադարանի գրապահոցում՝ 4 (615, 616, 2173 և 1979) և 1 օրինակ էլ՝ ձեռագրապահոցում (ՄՄ 9268). մնացած օրինակները ՀՀ-ից դուրս են գտնվում (ըստ Հայ Գրքի՝ գրքի օրինակներ կան արտասահմանյան 10 գրադարանում. տե՛ս ՀԳ, էջ 374, հ^տր 470):

ԱԳ-ի 2 օրինակներն էլ տարբեր են. մեկը *nla.am* կայքում տեղադրվածն է (129-ԱՀ), մյուսը նման է ՄՄ 9268 ձեռագրին: Ձեռագրին նման է նաև ԳԱԹ-ի օրինակը: Մատենադարանի գրապահոցում պահվող 4 գրքերից 3-ը (615, 616,

³ Հայ գիրքը 1512-1800 թվականներին. Հայ հնատիպ գրքի մատենագիտություն, [կազմեցին] Ն. Ոսկանեան, Ք. Կորկոտեան, Ա. Սաւալեան, Երևան, 1988, էջ 374, հ^տր 470 (այսուհետև՝ ՀԳ):

⁴ Այն, որ Աբրահամ Թրակացին մասնակից է եղել տպագրության ընթացքին, վկայում է իր տպարանում տպած Գրիգոր Տաթևացու «Ձմեռան հատոր»-ի հիշատակարանը՝ «Պարտիֆ յիշել և գտալօ մատենիս՝ գԹրակացի Աբրահամ դպիրն, որ իւր իսկ ձեռամբ անհանգիստ աշխատեալ ետ զմուրն սևաթոյր կապարեայ գրոց (ընդգծումը մերն է) ոչ հաւատալով այլոց մշակաց. յիշեցէ՛ք և զծնօղն իւր ըզՍարգիսն և զԱգիգն» (տե՛ս **Գրիգոր Տաթևացի**, Քարոզգիրք: Ձմեռան հատոր, Կ. Պոլիս, տպ. Աբրահամ Թրակացու, 1740, էջ 748, նույնը նաև **Գրիգոր Տաթևացի**, Քարոզգիրք: Ամառան հատոր, Կ. Պոլիս, տպ. Աբրահամ Թրակացու, 1741, էջ 740): Ըստ այս հիշատակարանի՝ Աբրահամ Թրակացին, հավանաբար, զուրկ լինելով «տպագրող վարպետից պահանջվող պատշաճ գիտելիքներից», մասնակցել է տպագրողի սև աշխատանքին (տե՛ս Ք. **Կորկոտյան**, Հայ տպագիր գիրքը Կոստանդնուպոլսում (1567-1850 թթ.) (այսուհետև՝ ՀԳ Պոլսում), Երևան, 1964, էջ 73):

⁵ **Եփրեմ Խուրի Ասորի**, Գիրք աղօթից, Կ. Պոլիս, տպ. Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու, 1741, էջ 96:

2173)⁶ նույնական են, իսկ չորրորդը (1979) մյուսներից տարբերվում է միայն էջ 64-ի պատկերով: 3 նույնական օրինակները համապատասխանում են ԱԳ-ի կայքում տեղադրվածին: Այսպիսով ստացվում է միևնույն տպագրության 2 խումբ (երկրորդ խմբում առանձնացրել ենք ենթատեսակ՝ ելնելով միայն էջ 64-ի նկարից)

1. ձեռ. ՄՄ 9268, 128-ԱՀ, ԳԱԹ-8463

2. ա. 129-ԱՀ, 615, 616, 2173

բ. 1979

Նախ դիտարկենք երկրորդ խմբի օրինակները: Մատենադարանի գրապահոցի 615, 616, 2173 համարները կրող հնատիպերը, չնայած թերթի և գրադաշտի չափերի փոքր-ինչ տատանումներին (համապատասխանաբար՝ թերթ 14,5×9, 15×10, 15,3×9,7, գրադաշտ՝ 11,5-12×7-7,5, 11,5-12×7-7,5, 11×7), տողաքանակով (տող՝ 19), մեկ տողին բաժին ընկնող տառերի և նիշերի քանակով, զարդաշրջանակներով նույնական են: Սրանց շատ նման է Մատենադարանի 1979-ը, որը պակասավոր է, սկսվում է էջ 45-ից, հետևաբար համեմատությունն արել ենք այդ էջից սկսած: Տողաքանակը նույնն է, թղթի չափը և գրադաշտը պայմանականորեն ևս կարելի է նույնական համարել (15×9,5, 11,5×7), թուղթը լուսագծերով է (թ. 269 կա լուսագրոշմ՝ խաղողի ողկույզի ստորին հատվածը (նայել ենք մինչև էջ 64-ը և հիշատակարանի էջերը). ի դեպ, մյուսների թուղթն էլ լուսագծերով է), սակայն տարբեր են լուսանցքների չափերը և էջ 64-ի նկարը (վերջինիս մասին կխոսենք ավելի ուշ):

Համեմատենք առաջին և երկրորդ խմբի օրինակները: Ինչպես նշել ենք, տարբերությունները մինչև 65-րդ էջն է, իսկ ամենից ակնառու տարբերությունը էջ 64-ի փորագրատվածներն է: Այժմ կետերով անդրադառնանք դրանց.

Նախ նշենք, որ այս երկու խմբի գրքերի տողերի քանակը էջ 65-ից սկսած 19-20 տող է, էջ 1-13՝ 19, էջ 14, 15՝ 23:

1. էջ 17. երկու խմբի գրքերում էլ տողաքանակը նույնն է, սակայն տարբեր է մեկ տողում եղած տառերի քանակը: Երկրորդ խմբի էջ 17-ում կա գծանկարային լուսանցազարդ՝ ծաղիկներ սափորի մէջ, որը զարդաշրջանակից բաժանված է ուղղահայաց գծով, զարդաշրջանակը ներառում է ճակատազարդը, պրականիշը գտնվում է էջահամարից առաջ, ունի հիշագիր, իսկ առաջին խմբինը չունի լուսանցազարդ, զարդաշրջանակը ձախ կողմից ընդհատվում է ճակատա-

⁶ Մատենադարանի օրինակները թերի են (սա վերաբերում է մինչև էջ 65). Մատենադարանի (այսուհետև՝ Մ) հմ. 615՝ պակասում են 19-30, Մ հմ. 616՝ 63-64, Մ հմ. 2173՝ 1-20, 31-32 էջերը, Մ հմ. 1979՝ Ա փեղկը, Տետղ-ը և 1-44 էջերը: Սրանց բոլորի թուղթն էլ լուսագծերով է. փոքր-ինչ որակապես այլ է թվում հմ. 616-ի թուղթը: Պակասավոր է նաև ՄՄ 9268 ձեռագրում եղածը, բացակայում են 255-258, 263-270 էջերը: ԱԳ 129-ԱՀ՝ ընկած է միայն վերջին թերթը՝ 268-270:

զարդի ստորին մասում, պրականիշը էջահամարից հետո է, շունի հիշագիր, տարբեր է նաև տողում տառերի բաշխվածությունը (նկ. 1ա, 1բ):



1ա. Ա խումբ՝ ՄՄ ձեռ. 9268



1բ. Բ խումբ՝ ԱԳ 129-ԱՀ

2. էջ 18-19. առաջին խմբի հնատիպն ունի 19 տող, երկրորդը՝ 20, տարբեր է նաև մեկ տողում եղած տառերի բաշխվածությունը, հետևաբար նաև հիշագրերը, որոշ բառերի գրությունը, ինչպես՝

1-ին՝ ծընօղ, ծընեալ, գյաւիտենաս, կատարեալ, մրկրտուլին, փորձեալ, ծընունդ և այլն:

2-րդ՝ ծնօղ, ծնեալ, գյաւիտենս, կատարել, մրկրտուլի, փորձել, ծնունդ և այլն (նկ. 2ա, 2բ):




2ա. Ա խումբ՝ ՄՄ ձեռ. 9268



2բ. Բ խումբ՝ ԱԳ 129-ԱՀ

3. էջ 21. բոլորովին տարբեր է այս էջի ձևավորումը. առաջին խմբի օրինակներում՝ այս էջի բովանդակությունը (տողաքանակը, տողում տառերի բաշխումը) նախորդ էջի բնագրի շարունակությունն է (4 տող), այնուհետև բաժանարար գիծ և այլ բնագիր («Կնքեա՛ գքեզ նշանաւ...» սկսվածքով): 2-րդ խմբի գրքերն ունեն ճակատագարդ՝ բուսական նախշերով, և թագակերպ վերջնագարդ, որոնց արանքում գրված՝ «Կնքեա՛ գքեզ նշանաւ...» մի քանի տողանոց նյութը: Նույն վերջնագարդը գործածվել է նաև 1-ին խմբի գրքերի տարբեր էջերում (տե՛ս օր. ձեռ. 9268, 74բ կամ հն. էջ 120) (նկ. 3ա, 3բ):



3ա. Ա խումբ՝ ՄՄ ձեռ. 9268



3բ. Բ խումբ՝ Ա.Գ 129-Ա.2

4. էջ 22 (չհ.). 1-ին խումբ՝ կա միայն Դավիթ մարգարեի փորագրանկարը՝ տասնադի քնարը նվագելիս, 2-րդ խումբ՝ նույն պատկերը՝ վերին և ստորին լուսանցներից զարդաշրջանակված (նկ. 4ա, 4բ):



4ա. Ա խումբ՝ ՄՄ ձեռ. 9268



4բ. Բ խումբ՝ Ա.Գ 129-Ա.2

5. էջ 23. 1-ին խմբում ճակատագարող փոքր-ինչ երկար է՝ զարդաշրջանակի հաշվին, տողերը՝ 15, զարդագիրը՝ հրեշտակագիր, 2-րդ խմբում տողերը՝ 14, զարդագիրը՝ թռչնագիր. բնականաբար տարբեր են նաև հիշագրերը (նկ. 5ա, 5բ):




5ա. Ա խումբ՝ ՄՄ ձեռ. 9268




5բ. Բ խումբ՝ ԱԳ 129-ԱՀ

6. էջ 24-27, 29-34. տողերը և դրանցից բխող մյուս հանգամանքները տարբեր են (տողաքանակ, յիշագիր), այնուհետև մինչև 46 էջը և 62, 63 էջերի տողաքանակները երկու խմբում էլ հավասարվում են, սակայն դեռևս հասկանալիորեն նույնական չեն հիշագրերը: Իսկ 47-59 էջերը նույն են ամեն ինչով: էջ 60-ում կրկին տողաքանակների տարբերություն է առաջանում՝ համապատասխանաբար 19 և 20, իսկ էջ 61-ում՝ 16 և 15 գրված տողեր և համապատասխանաբար 3 և 4 բաժանագիծ (նկ. 6ա, 6բ):



6ա. Ա խումբ՝ ՄՄ ձեռ. 9268




6բ. Բ խումբ՝ ԱԳ 129-ԱՀ

7. էջ 28. առաջին խմբի գրքերն երկու նյութերի միջև ունեն բաժանագիծ, բացի այդ՝ նախորդ նյութի վերջնատողը կրճատված՝ «... Փառք Հօր և Որդւոյ և Հո՛ւ», մինչդեռ երկրորդ խմբում տվյալ էջը սկսում է նոր նյութով, իսկ նախորդ նյութի վերջնատողն այստեղ ամբողջական է «... Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն» (տե՛ս հնատիպ ԱԳ, 129-ԱՀ, էջ 27) (նկ. 7ա, 7բ-1, 7բ-2):



7ա. Ա խումբ. ՄՄ ձեռ. 9268



7բ-1. Բ խումբ՝ ԱԳ 129-ԱՀ



7բ-2. Բ խումբ՝ ԱԳ 129-ԱՀ

8. էջ 32-33. երկու Աղոթքների միջև կա բաժանագիծ, քանի որ աղոթքներից մեկն ավարտվում և մյուսը սկսվում է նույն էջում, ապա դրանց տարանջատումը տրված է 1 բաժանագծով (Ա խումբ, էջ 33), իսկ տարբեր էջերում գտնվելու դեպքում այդ գիծը այլ դրսևորում է ունեցել (Բ խումբ, էջ 32) (նկ. 8ա, 8բ):



8ա. Ա խումբ՝ ՄՄ ձեռ. 9268



8բ. Բ խումբ՝ ԱԳ 129-ԱՀ

9. էջ 64. ինչպես նշել ենք վերևում, ամենից աչքի ընկնող տարբերությունը այստեղ գտնվող պատկերն է, որը երեք տարբեր դրսևորում է ունեցել: ՄՄ 9268 ձեռագրում եղած մի քանի կերպարների ով լինելը պարզելու հանգամանքն էլ մեզ պրպտումների մղեց (նկ. 9ա, 9բ, 9գ):



9ա. Ա. խումբ՝ ՄՄ ձեռ. 9268



9բ. Բ խումբ. ա՝ Ա.Գ 129-Ա.Հ



9գ. Բ խումբ. բ՝ ՄՄ 1979

Աչքի անցկացնելով Աբրահամ Թրակացու⁷ տպագրած Ազգային գրադարանի կաշքում⁸ եղած բոլոր օրինակները՝ նմանօրինակ պատկերները գտանք նաև Գրիգոր Տաթևացու «Ոսկեփորիկ» (էջ 8, 1746 թ.), «Փարոզգիրք - Չմեռան» (էջ 6, 1740 թ.), «Փարոզգիրք - Ամառան» (էջ 8, 1741 թ.) հատորներում:

Ձեռագրում եղած փորագրանկարն իր կերպարներով և վրայի գրություններ հար և նման է «Ոսկեփորիկ»-ում եղածին, որը մեզ, բնականաբար, ոչնչով չօգնեց: Սակայն Փարոզգրքի հատորներում հանդիպած գրեթե նույնատիպ փորագրապատկերները, չնայած որոշ տարբերությունների, հնարավորություն տվեցին պարզելու կերպարների ով լինելը, ինչպես նաև ճշտել գրությունը:

ՄՄ 9268 ձեռագրում եւ այս երեք գրքերում եղած պատկերագրությունը ըստ նմանության երկու խմբի են բաժանվում՝

⁷ Նա Թրակացի Սարգսի և Ազգիի որդին է: Իր տպագրական գործունեության ընթացքում (1734-1746 թթ.) հրատարակել է շուրջ 14 ամուսն գիրք:

⁸ <https://www.google.com/search?q=nla.am&oq=nla.a&aqs=chrome.1.69i57j0i512i2j0i30i3j69i60i2.9217j0j7&sourceid=chrome&ie=UTF-8>

1. ձեռ. 9268 և Ոսկեփորիկ (նկ. 10ա, 10բ)



10ա. ՄՄ ձեռ. 9268



10բ. Ոսկեփորիկ

2. Քարոզգիրք: Ամառան և Քարոզգիրք: Ձմեռան (նկ. 11ա, 11բ)



11ա. ՄՄ ձեռ. 9268



11բ. Ձմեռան

Առաջին հայացքից այս չորս փորագրապատկերները նման են, սակայն ունեն որոշ տարբերություններ: Այսինքն՝ գրքերը տպագրելիս նույն պատկերի համար տպագրիչն օգտագործել է 2 տպատախտակ⁹: Տարբերությունների մասին փոքր-ինչ հետո կխոսենք:

⁹ Աբրահամ Թրակացուն տպագրության հարցում աշակցել են «ծաղկաբար տպագրիչ եղբայրներ Բարսեղն ու Հակոբը, որոնք նրա հրատարակած գրքերի էջերը ճոխացնում էին պատկերներով ու զարդերով» (տե՛ս Ք. Կուրկոյան, ՀԳ Պոլսում, էջ 74): Սյա հանգամանքը նկատառելով՝ չենք բացառում, որ գրքերի մի խմբի փորագրապատկերն արել է մի եղբայրը, երկրորդը՝ մյուս եղբայրը: Սակայն սա էլ միանշանակ չէ, քանի որ Ղազար Ջահկեցու «Գիրք աղօթից»-ի երկրորդ խմբում ունենք Բ. ենթախումբ, որի փորագրապատկերը բոլորովին տարբեր է մյուսներից: Ինչևէ, սա լույս ենթադրություն է, որը կարող է փնտրվել:

Այժմ անդրադառնանք կերպարներին:

Առաջին խմբում պատկերված կերպարների ով լինելը պարզ դարձավ երկրորդ խմբի նկարներից (հմմտ. նկ. 11ա և 11բ): 1-ին խմբում վերին և ստորին մասի փորագրապատկերների բաժանարար գոտում կա գրություն «ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍ[Ա]Ի[Ո]Ր[Ի]Զ, ՄԱՅՐ (ՄԱ-ն՝ կապգրով) ԳՈՒԳՈՐԻ ՏԹԵԻ», նախավերջին բառի սխալգրությունը մեզ շեղում էր ճիշտ ուղուց, չնայած որ ՏԹԵԻ բառը հուշում էր ՏԱԹԵԻԱՅԻ-ն: Ինչևէ, մյուս խմբի նկարներում հստակ գրված էր «ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍ[Ա]Ի[Ո]Ր[Ի]Զ, ՄԱՅՐ ԳՐԻԳՈՐԻ ՏԱԹԵԻԱՅՈՅՆ»: Հաջորդիվ պարզ դարձան նաև նկարի երկրորդ մասում պատկերված կերպարները. ձախ կողմում հովվապետական աթոռին բազմած է «ՍԲՆ (ՍՈՒՐԲՆ) ՅՕՀԱՆ ԶՐՈՏՆԵՅԻ»-ն, իսկ աջ կողմում կանգնած է «ԳՐ[Ի] Գ[Ո]Ր ՏԱԹԵ[Ի]ԱՅԻ»-ն:

Առաջին և երկրորդ խմբում եղած փորագրապատկերները բաղկացած են վերին և ստորին հատվածներից: Վերին գոտու ձախակողմյան մասում զետեղված է գմբեթավոր բազիլիկ եկեղեցի՝ արևմտյան մուտքով, սակայն տարբեր է եկեղեցու բակային հատվածների ոճավորումը. 1-ին խմբում եկեղեցին ավելի փոքր է և լուսամուտների թիվը՝ քիչ, 2-րդ խմբում լուսամուտները երկաստիճան են, տարբեր է նաև մուտքային մասը: Այնուհետև պատկերված է քաղաքային միջավայր. կենտրոնում Գրիգոր Լուսավորիչն է՝ ձախ ձեռքին բուրվառ, աջին՝ հովվապետական գավազան (որոնք ևս գծագրական որոշ տարբերություններ ունեն). առջևում կանգնած է Գրիգոր Տաթևացու մայրը, ով պատրաստվում է ընդունել Գրիգոր Լուսավորչի մեկնած կանթեղը՝ որպէս «հայ դպրութեան վերաբռնկում»¹⁰: Առհասարակ տարբեր են ճարտարապետական լուծումները, ձևավորումները: Փորագրապատկերի երկրորդ մասում եկեղեցու ներտարածքն է՝ մասնավորապէս կենտրոնական հատվածում ավագ խորանն է՝ նկարազարդ գմբեթադրով և խորանի հետնապատով՝ ոճավորված բուսազարդերով և կենտրոնում լուսարձակող աստղաձև արևով (միմյանցից տարբերվող): Հարգարված է նաև բեմառէջքը (կրկին տարբերվող): Աղոթասրահի կենտրոնում նկատելի են գմբեթակիր զույգ մույթերը, որոնք աչքի են ընկնում քանդակազարդ խոյակներով: Ձախ կողմում՝ հայրապետական աթոռին, բազմել է Հովհան Որոտնեցին, որի դիմաց կանգնած է Գրիգոր Տաթևացին՝ կարծես քարոզ կարդալիս, և նրան ունկնդրում են ծնրադիր աշակերտները, որոնց թիվը ևս տարբեր է: Սա առաջին խմբի փորագրապատկերի մասին (տե՛ս կետ 9, նկ. 9ա):

Երկրորդ խմբի ա ենթախմբի փորագրանկարում առկա է միայն Գրիգոր Տաթևացու քարոզի գրվազը (տե՛ս կետ 9, նկ. 9բ):

Այս էջի փորագրանկարով առանձնանում է Մ 1979 հնատիպը (Բ խումբ, Բ

¹⁰ Առավել մանրամասն և հանգամանալից մեկնաբանությունը տե՛ս **Շողակաթ Դևրիկյան**, «Գրիգոր Տաթևացու վարժի հայսմավուրային խմբագրության պատկերային արտացոլումը XVIII դարի առաջին կեսի հրատարակությունների փորագրանկարներում», *ԲՄ*, 31, 2021, էջ 254 (էջ 251-261):

ենթախումբ), որտեղ եղած պատկերը բոլորովին տարբերվում է նախորդ երկուսից (տե՛ս կետ 9, նկ. 9գ): Քանի որ սովորաբար գրքերում բովանդակությունը կից տրվում է համապատասխան պատկերը, ապա փորագրանկարում պատկերված է Գրիգոր Նարեկացին՝ վեհապետական հագուստով: Մյուս կողմից անհասկանալի է մնում, թե ինչու է նախորդ երկու խմբի փորագրանկարներում պատկերված Գրիգոր Տաթևացին՝ մի դեպքում իր աշակերտների և ուսուցչի, իսկ բաժանարար գոտուց վեր՝ Գրիգոր Լուսավորչի և մոր հետ, մյուս դեպքում՝ միայն իր աշակերտների հետ:

Առայժմ մեզ հայտնի տարբերակները սրանք են:

Այսպիսով, Հազար Ջահկեցու «Գիրք աղօթից»-ը՝ տպագրված 1742-1744 թթ., Կ. Պոլսում՝ Աբրահամ Թրակացու տպարանում, մեզ հայտնի է պայմանական երկու (Մ 1979-ը երկրորդի ենթատեսակ ենք համարել, քանի որ տարբերությունը միայն այս նկարն էր. սկզբից թափված լինելու պատճառով (էջ 1-44) անհնար էր այդ էջերը համեմատել և պարզել, թե այդտեղ տարբերություններ կա՞ն և լինելու դեպքում ո՞ր խմբին կպատկանեն) տարբերակով: Թե ինչո՞ւ է այս գիրքը տպագրվել մի քանի փոփոխակով և թե ինչո՞ւ են տարբերությունները մինչև էջ 65-ը, դժվար է ասել: Հիշատակարանների բառացի համընկնումը և սակավ փաստերը, ինչպես նաև Աբրահամ Թրակացու տպարանի մասին տվյալների գրեթե բացակայությունը թույլ չեն տալիս որևէ եզրահանգման գալ: Կարող ենք լուր ենթադրություններ անել:

MARINE SARGSYAN

THE VERSIONS OF THE PRAYER BOOK BY GHAZAR JAHKETS'I

PRINTED IN 1742-1744

Key words: Early printed book, Ghazar Jakhets'i, Prayer Book, Abraham T'rakats'i, printing house, Constantinople, manuscript, engraving.

The article discusses the versions of the *Prayer Book* of Ghazar Jakhets'i, published in the printing house of Abraham T'rakats'i in 1742-1744 in Constantinople. This case is not unique in Armenian book printing, since there exist several variants of other books as well.

The reason for this study was Ms M9268, which contains two printed books (the first of them is the *Prayer Book* by Ghazar Jakhets'i). Out of the 257 pages of the book, 80 are handwritten and the rest are printed, with 10 sheets of handwritten text at the beginning and 7 at the end. They are related to the calendar. The rest of the handwritten text consists of prayers and excerpts from the *Hymnary*, 2-3 sheets of which are inserted into the printed text, but they are not connected with the content of the printed material. However, both manuscript and printed texts are prayers. We found out that there are two conventional groups of the same early printed book (the second has a subgroup):

1. Ms M9268, 128–ՍՀ (collection of National Library), 8463 (Charents Museum of Literature and Art);

2. a. 129–ՍՀ, М. pb. (Matenadaran early printed books) 615 (the first 30 sheets are missing), М. pb. 616 (pages 61 and 64 are missing), М. pb. 2173;

b. М. pb. 1979 (pp. 1–45 are missing).

The differences between the versions of the book are noted up to page 65. The most obvious one is the engraving on page 64. We found out that this engraving, in its turn, was made from two different typographic samples (except for М. 1979, the engraving of which is completely different).

МАРИНЕ САРГСЯН

ВЕРСИИ «МОЛИТВЕННИКА» КАЗАРА ДЖАХКЕЦИ, НАПЕЧАТАННАЯ В 1742-1744 ГГ.

Ключевые слова: Старопечатная книга, Казар Джахкеци, Молитвенник, печатная книга, Абраам Тракаци, типография, Константинополь, рукопись, гравюра.

В статье сопоставляются печатные варианты «Молитвенника» Казара Джахкеци, изданные в типографии Абраама Тракаци в 1742-1744 гг. в Константинополе. Несколько вариантов одной книги – это не уникальное явление в армянском книгопечатании.

Поводом для работы послужила рукопись Матенадарана 9268, которая содержит два печатных материала (первый из них – «Молитвенник» Казара Джахкеци). Из 257 листов книги 80 рукописные, а остальные печатные, причем 10 листов рукописного текста находятся в начале, 7 в конце. Они посвящены календарям. Остальной рукописный материал – молитвы и отрывки из Гимнария, размещенные по 2-3 листа промеж печатного текста, не имеет отношения к содержанию печатного материала. Общее между ними лишь то, что и эти, и печатные материалы являются молитвами. В ходе исследования выяснилось, что имеются две условные группы одного и того же издания данной старопечатной книги (у второй есть подгруппа).

1. Рук. 9268, 128–ՍՀ (коллекция Национальной библиотеки), Музей Литературы и Искусства им. Чаренца - 8463

2. a. 129–ՍՀ, МСТ (Матенадаран, старопечатная книга) 615 (первые 30 листов отсутствуют, М. ск. 616 (отсутствуют сс. 61 и 64), М. ск. 2173

б. М. ск. 1979 (сс. 1-45 отсутствуют).

Различия в вариантах книги отмечены до страницы 65. Наиболее очевидным отличием является гравюра на странице 64. Нам удалось выяснить что она, в свою очередь, сделана с 2-х разных типографских образцов (кроме М. 1979, гравюра последней совершенно другая).